
ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
...ՁԻՄ
ԿԻԼԻԿԻԱ

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

...ՁԻՍ ԿԻԼԻԿԻՍ

«ԱՄԱՐԱՍ»
ԵՐԵՎԱՆ
2005

կստանանք նոր, թարմ եռագույններ: Ռազմանավին հրաժեշտ տա-
լիս նավաստիները պատիվ են տալիս դրոշին: Իսկ մենք, երկար
կանգնած ափին, լուռ նայում ենք մեր բարեկամին, մեր տանը, մեր
անցյալին և ապագային...

Մենք ժամանակ ունեինք: Տասը րոպեից պետք է կղզուն մոտե-
նան երկու ջրային տաքսի: Ինչքան չլինի, տասներեք հոգի ենք և
բեռների մի բլուր: Մեզանից քիչ հեռու կանգնած են Սուրբ Ղազար
կղզու վանականները: Նրանք նույնպես լուռ էին: Նրանք հասկա-
նում են մեզ: Նրանք են մնում մեր փոխարեն: Եւ իհարկե, նրանք են
աբբահայր Եղիան, հայր Մեսրոպ Սուլահսյանը՝ տնտեսական և ֆի-
նանսական հարցերով պատասխանատուն, հայր Վահան Օհանյա-
նը՝ գլխավոր քարտուղարը, հայր Հովսեփ Բեխեսպիլյանը՝ փոխաբ-
բահայրը, հայր Վրթանես Ուլուխոջյանը՝ տնտեսվարը, հայր Եղիշե
Քեսաբցին՝ խոհանոցի և եկեղեցու պատասխանատուն, հայր Գրի-
գորիսը, որը դոկտորական դիսերտացիա է գրում աստվածաբա-
նության գծով, հայր Հարություն Պզտիկյանը՝ թանգարանի տնօրե-
նը, Վարդան Կարապետյանը՝ երիտասարդ լեզվաբան, որը հասցրել
է դառնալ եվրոպական մշակույթի ուսումնասիրման հայկական
կենտրոնի հիմնադիր: Ինը օր մեր հայրենակիցների հետ էինք, այդ
իրենց տեսակի մեջ արտասովոր եկեղեցականների, որոնք ներկա-
յացնում են առասպելներով պարուրած Մխիթարյան միաբանությու-
նը: Սերնդե-սերունդ փոքրիկ կղզու մշտական բնակիչների ոչ ստ-
վար խումբը հավաքել, կուտակել, բազմապատկել և խնամքով
պահպանել է ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության մտա-
վոր գործունեության անգին հուշարձաններ:

Բավական է հիշեցնել, որ վերջին երեք դարերի ընթացքում Վե-
նետիկի ծոցը և նրա ափամերձ շրջանները բազմիցս ենթարկվել են
նվաճողների հարձակումներին, բայց նրանցից ոչ ոք, այդ թվում
նաև Նապոլեոնը, չի համարձակվել մատով դիպչել այն գլուխգոր-
ծոցներին, որոնք ցուցադրվել են Բայրոնի գովերգած հայկական
կղզու թանգարանում:

Այստեղ ինձ թույլ եմ տալիս փոքրիկ, այսպես ասած, քնարական

Հայտնի գրող, բժիշկ, ճանապարհորդ Զորի Բալայանի «...Ջիմ Կիլիկիա» գիրքը գրավիչ պատմություն է Սև, Ազովի և Միջերկրական ծովերով անօրինակ նավարկության և արկածների մասին՝ Մատենադարանում պահվող միջնադարյան հայկական ձեռագրերի մանրանկարների նմանությամբ անձնակազմի անդամների ձեռքերով կառուցված ոչ մեծ առագաստանավով: Էսսեի, ճամփորդական նոթերի և օրագրի ժանրով ստեղծված գրքում հեղինակն իր տեսածն ու տպավորություններն է կիսում անձնակազմի կյանքի, ծայրահեղ պայմաններում գոյության համար նրանց պայքարի մասին, սիրով և ջերմությամբ է բացահայտում իր ընկերների կերպարները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում պատմությունները տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների հետ հանդիպումների մասին: Գիրքը հարուստ է նավի վրա արված լուսանկարներով: